

Մ Ա Մ Ի Մ

Լ Ր Ա Գ Ի Ր

30 Փարայ

30 Փարայ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր.	9 Մէճ.
Վեցամս.	Կ. Պոլսոյ 6
Մասը թղթատարով զրկուած	80 մրանք
Մանուցման տողը մէկ անգամի հա.	
մար 5 զը, Երկու անգամի համար	2 զը
է. աւելի անգամներու համար զատ սա.	
կարկուծիւն կը լինի :	

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

Կուրս գնացած լրագրաց ճանրու	ժախքը խմբագրութեան կայ է :
Լրագրոյ վերջնական նամակ կ'ըստ	որ և իցէ գրութիւն խմբագիր - Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պոլսոյ Պաշտօն-Գարու ձեւով պէյ յաւ թիւ 31 Մարտի գրասենեակը :
Ճանրու ժախքը չվճարուած նամակ չընդունուիր :	
Չպակուած նամակ, յօդուած, ան հոյսն տրուիր :	

Ք ԶՐԻ ԼՐԱԳԻՐ ԿԱՐԿԱԼ ԳՈՂՈՒԹԻՒՆ Է 30 Փարայ Հ Ա Ն Ա Պ Ա Զ Օ Ր Ե Ա Յ 30 Փարայ Ք ԶՐԻ ԼՐԱԳԻՐ ԿԱՐԿԱԼ ԳՈՂՈՒԹԻՒՆ Է

ԲՈՎԱՆԻԳՈՒԹԻՒՆ

Հեռագրական. - Խառն. - Ազգային լուրեր. - Տնտեսական Միութիւն շայնց, կարծիք ի Ռուսաշայնց. - Կրթութիւն ի շայն ճեռամբ Միտիտարաց. (Երբ և չէր) - Թղթատարութիւն ի Միջագետաց. - Ս. Փ. Փարագեան և իւր կարծիքները (Երբ) - Հանգանակութիւն. - Ազգ. :

ՎՄՏԱՆԻՆԵՐԻ ՊԱՐԿՈՒՄ 2 ՆՈՅՏԵՄԲԵՐ ՀՆՈՒԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Այս առաջը հասած հետքերը Փարայ 15 նոյ Բառի լրագիրը չկարծիր որ Պ. Պ. Տրէյտին, Լէոն Ա և ժ. Տրէյտին անգամակցին նոր նախարարութեան Բեղապետը 15 նոյ. Աժանս Ռիւս սուտ կը հանէ Պ. աը կիկրի հրատարակող զրոյցը : Նամակ պէն սուտ կը հանէ Ռուսական զորաց ստորին Մեջը գրուելու զրոյցը : Թունուք 15 նոյ. Կը հաւատան թէ Արիստիտի Տըրիպուրայ առջև սպասող Տրեստական Լաթուր - Տրիպուրայ չորեքանուն ետ կ'ընեն :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանն հրաման ւրբա որ ծառայութեան ժամանակ նին լրացնող կաննաւոր զորաց արծակուրդ տրուի : Երկրորդ նախարարութիւնը չոքեանաբեր յատկապէս արձակելու զորականներն իրենց ուղիքը տանելու համար : Թաւ յիշ շոքուանու ալ Կ. Պոլսոյ պահապան զորաց արձակեալները տանելու յատկապէս : Բ. Դուռն Կարագլի արժե տեսաց պատուիրակներուն հետ եղած բանակցութեանց արդիւնքը Ռուսոյի գեղարտատան հարգեցից : Թունաստանի թողութիւնը երբ կ'ընդունուի և վերջին բաժնին, որ են Վրոս և շրջակայքը, շարքը օրուընէ սկսեալ կը պարպուի, և տեղական Օսմանեան զորքն և պաշտօնատարք Սէլանիկ կը փոխադրին : Հիմադի նորընտր կուսակալը չոքեանա չնտած, Վեհ. Սուլթանին իւր քով կանչեց զայն, և երկարօրէն խօսակցելով հրահանգներ տուաւ Արաբական գործոց խաղաղացման նկատմամբ : Վազըթ կ'իմանայ թէ դեսպանաց վերջին գումարման մէջ տնտեսական ներկայացուցիչներէ ուսումը հարցուցին Պ. Տը Նովիքոֆի թէ իրաւ է որ Ռուսիա ընդհանուր պարտուց խնդրոյն հետ մի և նոյն ժամանակ պատերազմական սուգանաց խնդրոյն կարգադրուի պահանջած է, (ինչպէս ծանուցին տեղական լրագիրը), և Ռուսական դեսպանն յայտարարեց թէ բարոյին սուտ է այդ լուր : Պ. թիւսոյ տեսնելով այս ժխտում, բարձրաձայն ձայնակեր և գոչելով «Այսպէս ուրեմն բոլոր աշխարհ ստախոս է» : Միւս դեսպանաց իմացուցին են թէ Պ. Տը Նովիքոֆի յայտարարութիւնն իրենց կառավարութեան պիտի հնազարդեն :

Րիպոլսոյ մէջ տիրող ապահովութիւնը տեսնելով, անդ զրկուած զորաց մէկ մասն ետ պիտի կոչէ : - Լէվոնի շէրլա Պահարէն նոյեմբեր 12 թուով իրեն ուղղուած հեռագիր մը կը հրատարակէ ծանուցանող թէ Խըթիլին կողմէ Սաֆիէթ փաշա Կ. Պոլսոյ զրկուած է պաշտօն ունենալով Վեհ. Սուլթանին շնորհակալութիւն կայանել այն հոգածութեան համար զոր միջոցուցած է Եգիպտոսի բարեկեցութեան նկատմամբ, հոգածութիւն որոյ մէջ նոր թանկագին փորձը տուաւ Օսմանեան Գոյնիւրաց առաքմամբ ի Գահիրէ, ինչպէս նաև Կ. Կ. Վեհախաղութեան կողմէ խըթիլին տրուած պատուանշանին համար - Վազըթ, հաստատելով Լէվոնի յայ լուրը, կ'ըսէ սակայն թէ զրկուած Եգիպտական պաշտօնատարն ս'ի թէ Սաֆիէթ, ալ ծանօթ թալաթ փաշան է, քարտուղար խըթիլի մասնաւոր Դիւանին, և թէ Մահմուտ Երկրորդ Էֆէնտի անուամբ մի ըստորակարգեալ պաշտօնատար կ'ընկերանայ նմա : Սոքա այսօր կամ վաղը Կ. Պոլսոյ կը հասնին : - Ոչխարաց տասնորդին հարիւրն ճը պիշըըններուն բարձր ման յատկացած լինելով, երւմտից նախարարութիւնն հրաման զրկեց գաւառներն, որպէս զի ոչխարաց տասնորդին հարիւրն 55 Օսմանեան կայսերական Պանքային ճիւղերուն յանձնուին : - Հեռագրատուն մը հաստատուած է ի Վիդէ, Հէքեարի : - Կը ծանուցուի թէ Նայիլի Սուլթան (Վեհ. Սուլթանին քոյրը) կուրծքի տկարութիւն ունենալով, բժշկաց խորհրդով Պէրուլ կ'երթայ : - Ռուսոյի և Օսմանեան պատերազմը շարքը օրը Ռուսոյի դեսպանատունը գումարեցան պատերազմական սուգանքի խնդրոյն վերայ բանակցելու համար : - Շարքը աւել Լէվոնի Հէքեարի մէջ հետեւեալ հաստատուած կը տեսնենք, որ անտեղութեանց հիւսք մը կը լուր մեզ : Երազիրք ոմանք, և ի մէջ այլց կայիկանն կը շարունակեն խորհիլ թէ թուրքիս Ռուսոյի դերասանական պահանջին փոխարէն Հայաստանի մէջ երկիր մը տալ կ'առաջարկէ : Դուռը վերջին ժամանակներս իւր վրայ եղած ճնշման հակառակ տակաւին որոշ միջոցներ ձեռք առած շիւրի աչք նահանգին մէջ բարենորոգումներ մտցնելու : Մի կողմէ Ռուս գործակատարքը գեղարտութիւն կը բարձրանայ մէջ : Սիւս կողմէ Պարսկաստանի փրկուած Ռուսի Սուլթանն աւելի կը յօժարի Հայաստանի կողմէն երկիր թողուլ քան թէ կայսրութեան ուրիշ որ և է կողմէն : Մանաւանդ եթէ խօսք տրուի իրեն որ Եգիպտոսի հետ յարաբերութիւնք պիտի բարձրեն Սուլթան և Գերմանիա նիւթացէ Վահ չուին ոչ Եգիպտոսի և ոչ Հայաստանի մէջ : Իտալիա գրգռեալ է Ռուսոյի պատճառաւ և Եգիպտոսի վրայ աչք ունի : Իսկ Ռուսիա նախանշուած աչք կը տեսնէ Հնդկաստանի Անգլիական ուղին : Այս զրոյցն որչափ և պնդելով հրատարակեն լրագիրքը ոմանք, ոչ մի իրողութեան վրայ հիմնեալ չէ մինչև ցարգ : մինչև իսկ, եթէ այսպիսի կարգադրու-

թիւն մը կարենայ ընդունուիլ Դրենն, զոր չեմք յուսար, չկրնար գործադրել առանց Պէրլինի դաշնադիրն ստորագրող տէրութեանց հաւանութեան, վասն զի յիշեալ դաշնադիրը բացարձակապէս կ'արգելու պատերազմական սուգանքըն հոյալին փոխարինութեամբ կարգադրուելու պատահականութիւնը : - Յունաստան որոշած է դեսպանութիւն մը հաստատել ի Մատրիտ, և Սպանիական կառավարութիւնն ալ դեսպան պիտի ունենայ յԱթէնս : Վազըթ կը կարծէ թէ Սպանիա այսուհետեւ գործու քաղաքականութիւն մը պիտի բռնէ յԱթէնս : - Իրեքի կառավարիչ կուսի Նիլի փաշային և Փրիզընտի կառավարիչ Հասան փաշային, որք երբեք Ալպանիական շարժման գըլուրը կը գտնուէին, Օսմանեան զորաց Միլիտարիստիկան աստիճան տրուեցաւ փոխարէն իրենց քաղաքային աստիճանին : - Վազըթ կը ծանուցանէ այսօր թէ Դիպուր պարունակելու կառավարիչ վար գըլուած Գերմանական վերջնական վերջնական շարքը վերջնական ընտանած և այս խնդիր վերջ գտած է : - Նիկովիցիոյ կառավարութեան հաշուակալութեան մէջ անկարգութիւն նշարուելով, Կ. Պոլսոյ քաղաքապետական պաշտօնատար մի իրկուեցաւ քննելու և կարգի դնելու համար : - Պարսկաստանէն եկած լուրեր կը ծանուցանեն թէ Աֆղանստանայ Ապտիւրահման Էմիրին հակառակորդ Էլյուսայ խան, որ, ինչպէս զիտեն ընթացողք յաղթուելով Պերուսաստան փախած էր, յուսահատուած իրեն խնդրեց : Հնդկաստանի մէջ հրատարակուած Պարսկական թերթ մ'ալ կը ծանուցանէ թէ Աֆղանստանայ Ապտիւրահման Էմիրն այս անգամ Գանուսհար մտած ժամանակ քաղաքն աւարտութեան մասերն է, որովհետեւ բնակիչք Էլյուսայ խանի կուսակից են եղեր : Ասկից զատ, Ապտիւրահման 8 իւլէմն ի մահ դատապարտեց Էլյուսայ խանի կուսակից ինչնուն և Ժողովուրդն Ապտիւրահմանի դէմ զրգուելուն պատճառաւ : - Անգլիոյ մէջ ընկերութիւն մը կազմուած է, աշխարհի շուրջը պըտապտ մ'ընել ուղղութիւնն փախաքը կ'առարկուի համար : Յիշեալ ընկերութիւնը Սէյլան անուն ամբողջն, ընդարձակ և արագընթաց չոքեանաբ գնած, իւր ընթացիկ ուղեւորութեանց ծրագիրը շինած, և ամեն պատրաստութիւն տեսած է : Սիւսոյ 12/23ին Կ. Պոլսոյ պիտի դայ, և ասկից ալ ուղեւորներ պիտի առնու, եթէ գտնուին աշխարհի շուրջը պըտելու փախաքը հարուստ անձինք : Ուղեւորութիւնն ինն ամիս պիտի տեւէ, և ուղեգրինն է 400 անգլիական լիբրա : - Մայրաքաղաքս բնակող պատուաւոր երբագրիք, և տեղացուցմէ ոմանք անոնց զրգումքը, երազնասիրաց (Ֆիլոսոֆի) ընկերութիւն մը կազմեցին ի Քէրա, երազնասիրական արուեստը քաջակերտու, և իրենց մէջ նուագահանքէնք տալով զուարճութեան լաւ միջոց մը հաստատուելու գովելու նըպատակաւ : - Վերին Ալպանիոյ մէջ Տրինա գետն իւր գնացքը փոխելով, շատ մը գաղտնեւոր և ձորք ողողած և իւր 200 հազար սակոյ վնաս պատճառած է : - Վազըթ կ'իմանայ թէ վերջերս ի Մատրիտ տեղի ունեցած մեծ ձիարշախ մէջ, մրցանակ ըստացող ձին է եղեր ժամանակաւ իրապէս թագուհոյն թուրքիա-

յին գնած մէկ նժոյգին ձագը : թուրք լրագիրն իրաւամբ կը ցաւի որ մինչդեռ այս երկրի ձիերը գերազանց յատկութիւններ ունին, որոցմէ օտարագրք օգուտ կը քաղեն, մեր մէջ բնա շանք չլինիր նոցա թիւը բացմանցելու, և ընտիր տեսակ ձիերը կը նուազին ի թուրքիա : Հայաստանի ժողովուրդն ալ շատ անհոգ է ձի պահելու, բազմացնելու և տեսակն աղնուակցնելու մասին : - Շարքը գիշեր Բերա, Աղա համալ թաղն հոգեհ ժագեցաւ Պ. Հաճօրուլչի կալուածներէն և մէկ ու կէս տուն այրեցաւ : - Արաբական շարքը լուսնայութիւնը երկրաշարժի թեթեւեղութեամբ տեղի ունեցաւ մայրաքաղաքս մէջ : - Ռուսիանու թիւնն անցեալ շարքի մաշոնեցաւ ձեռք ձգել Պէլքոյի շրջականերն ապագատակող աւաղակներէն մի քանին, որք Պալչեքի գաղթականներն են : Միացեալներն ալ կը փնտռուին : - Հինգ շարքի գիշեր ոտտիկանութեան պահակախումբ մը Բ. Դըրան մօտ երկու շարքործ բռնեց, որք զորականի կերպարանք մտած այն կողմերը կը գեղեցիկ անցորդները կողպտելու նպատակաւ : ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ Ս. Պատրիարք Հայրը կիրակի օրը Գարակէօմիւրիկի եկեղեցոյ տօնին առթիւ Գարակէօմիւրիկ երթալով խրատ խօսեցաւ և ժողովուրդը միմիջարեց : Կիլիկիոյ Ամեն. Տ. Մկրտիչ Ս. կաթողիկոսը յառաջիկայ կիրակի օրը Բերայի եկեղեցին հանդիսաւոր Ս. Պատրիարք պիտի մատուցանէ : Բոլոր թուրք լրագիրք կը ծանուցանեն Հայոց Տնտեսական ընկերութեան վերջնական կազմութիւնն ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հայր, և իրեն բացատրութիւնն սա միայն կ'ըսեն թէ Հայոց մեծատուններէ բաղկացեալ այս Մարմին պըրատաց և պանքըրտաց օգնելու պաշտօնն ունի : Երէկ Միացեալ ընկերութեանց կեդրոնական ժողովոյ ինչ նիստը տեղի ունեցաւ Ղապթիոյ կեդրոնական վարժարանին մէջ, նախագահութեամբ Առաքել Ալթուն-Տիւրքի Էֆէնտի և ներկայութեամբ 30ի չափ երեսփոխանաց : Արեւմտ 7 Պէրս բացուելով, նախորդ նախատեսութեան իւր կարգացուեցաւ և վաւերացուեցաւ : Դիւանական թղթակցութիւնը կը պարունակէր. 1. Նորընտիր երեսփոխան Գափանաճեան Լեոն պէյի հրատարակելը : այս հրատարական, որ անձնական գործող թուրք թիւնը կը պատճառէր ցաւօք սըրտի ընդունուեցաւ : 2. Կիլիկիան վերականգնութեան նախորդ քաղաքատար Պ. Մ. Գալիթեանի մի բարձրագրին, որ վարչութեան քննութեանց յղուեցաւ : 3. Տնօրէն ժողովոյ մի պաշտօնագիրն, որ կ'առաջարկէր հետագայ երկու օրինական յաւելումները ներմուծել ընկերութեան ներքին կանոնագրին մէջ : Ա. Երեք ամիս իւր տուրքը չվճարող երեսփոխան մը, երբ Տընօրէն ժողովէն դուրս աղբարարութիւն ընդունելէ յետոյ ալ անփոյթ մնայ, հրատարակ կը համարուի : Բ. Առանց կեդրոնական ժողովոյ նախագահէն գըլուոր արտօնութիւն խնդրու, անընդհատ երեք ամիս կուտանդնուպոյսէն բա-

ցակայ մնացող երեսփոխան մը հրատարակ կը համարուի Արտօնութիւնը չէ կարող վեց ամիսէ աւելի տեւել : Այս առաջարկներ Օրէնքագրական դիւանին ընտելութեան յըրբեցան : Այսուհետեւ Տնօրէն ժողովոյ հրատարականի ինքիքը նկատուութեան առնուելով, առնապետը, Պ. Միսաք Չերազ, յայտարարեց անաբանեալ չէր, թէ պարզապէս իւր անձնական գործոց ծանրացմանը համար կը թողուր իւր պաշտօնը, գրեթէ վեց ամիս զան շարունակելէ յետոյ, և թէ կը պնդէր իւր հրատարականին վրայ ժողովականք, 2-3 ժամ վիճարանելէ յետոյ, քուէարկուաց մեծամասնութեամբ երկրց մերժեցին հրատարականը : Տնօրէն ժողովն յայտնեց թէ անփոյտ էր իւր որոշումն, և քուէարկուեցաւ : Առաջին անգամ վիճարանութեան փակուելու վճռուելով, որոշուեցաւ որ վարչութիւնը 15 օր ալ շարունակէ իւր պաշտօնավարութիւնն և ապա վերջնական քուէարկութեան մը դուրս իւր հրատարական : Առեւտրը փակուեցաւ 11/12 ին յաղորդ նիստն երկու շաբաթէն գումարելու որոշմամբ : Տնտեսական գործոց խորհրդարանի Գարեգին Էֆէնտիի հրատարական ընդունելով վարչութիւնը, Ս. Պատրիարք հօր յանձնարարեց նոր ընտրութիւն կատարել ըստ օրինի : Բ. Դրենն ծանուցալի մը կառավարիչ Պատրիարքարանի պաշտօնակն ընել Աղալին (Հէքեարի) Ս. Բարթոլոմէոս վանաց հայր Բաղուէն Տ. Յովհաննէս վարդապետն Ամբաստանեալ է սա, թէ Պարսկաստանէն Օսմ սահմանը գաղթող Գըրդազ համար անցեալներն առ Պատրիարքարան ուղղեալ շարախօսութեան հետագային գրգռել է, և թէ Պարսկաստանի քրդաց գըլուաւորաց հետ յարաբերութեան մէջ կ'գտնուի : Սա այն վարդապետն է որ անցեալներն ճանգորդութեան մը ժամանակ իւր և ընկերացի վըրայ յարձակող քրդաց Գիմակալեց և անոնցմէ միոյն սպանուեցաւ պատճառաւ թէպէտ ի վան բերուելով բանտարկեցաւ, սակայն ապարձակուեցաւ իբրև անպարտ վարչական խորհրդոյ այս (շարքը) առուր նստին կը ներկայանայ սոյն խնդիրն : (Փառն) Պատրիարքարանը նկատելով որ կեսարիոյ առաջնորդ թեւ Տ. Եղիա Ս. Արքեպիսկոպոս թէպէտ երկար ժամանակէ հետէ սոյն պաշտօնին մէջ կը գտնուի և աղբարի երեսէրեաց մեծագոյն մասն համակեր են իրեն, սակայն ծերութեան ու վատտողութեան պատճառաւ այսուհետեւ կարող չէ ի բարուաւ հովուել իւրն, որոշեց որ առաջնորդական տիրողը դարձեալ իւր վրայ մնալով շարունակէ առանձնաւոր վանքին մէջ, և առաջնորդական պաշտօնը Գաւառ ժողովէն ընտրեալ փոխանորդի մը յանձնուի պատրիարքական կնդրակաւ և կայսերական հրամանագրով պայմանաւ որ անկալ ըլլայ Տ. Եղիա սըրբաղանէն : Այս որոշումն հարգուեցաւ Նօրին Գերապատուութեան և Գաւառ ժողովին (Ես)

Թական Խմառոյ՝ Լուր հարգալից
նախակութեանն խիստ տարբեր վի-
ճակի մը մէջ կը գտնէ մի ո՛ր և է
նկատառու այդ զբաղաբային դըպ-
րոցը՝

Այդ զբաղընն վիճակը վրձ-
նաբար հասցնելու համար կար-
ծեմ բաւական կը լինին հետեւեալ
տողերը՝
Այնչառ շարժու պատեհութիւն
ունեցալ այցելութիւն մը տալ ընդ-
դէպ զբաղընն, սակայն հոն գտալ
մի տեսուչ, մի դաստառ, և մի
դասապան, ու ասոնց հետ մէկտեղ
եղա՝ թուրք և հայ Հայ աշակերտ-
նայ աշակերտական Գեթ Թիւրք
ակադեմիայի Գեթ Թիւրք հայտնու-
ած համագումարն համապատաս-
խան գտալ ճիշդ այն թուոյն, զոր
կը ներկայեն զբաղընն Պաշտօնա-
յառքս իրողութիւն է, չը կար-
ծուի թէ ես աշակերտաց բացա-
կայութեան ատեն միայն ներկայ
եղողներ հաշուի առած ըլլամ։ Ես
պաշտօնական աղբիւրէ տեղեկու-
թիւններ քաղեցի ու նորէն կը պըն-
դեմ ինչեւիտի քաղաքային ընդհան-
ր միայն երկու աշակերտ ունի, ինչ
անմասօթ են թէ և այն պատճառ-
ներ, ոչք եթէ կան՝ գոցէ առկթ
տուած լինին այս վիճակին, սակայն
զայս քալ զիրտն թէ կառավարու-
թեան կողմէ զբաղընն ծախքեր
անընդհատ կը վճարուին, բայց կը
թուի թէ ցարդ ոչք պէտք ըզ-
գացած է անոր ներքին կացութիւն
գնենը, որուն համար Արքայի աշ-
խուհ պէտք չեն։

Գանի որ ծախուց դուրսը կա-
ռավարութեան քսակէն կ'ընէ, ին-
չու յապարդիւն վատնուի։ Սոյն
տողեր վրձնմ. կառավարին ուշա-
դրութեանը կը ներկայացնեմ, որ-
պէս զի յօգուտ հասարակային կըը-
թուի թեան, ու մ'իս քննադատու-
թիւր կը թուի, շնորհ ընէ նոյն զբաղ-
ընն խափանման պատճառներ,
ինչ որ են, բաւականով, իւր անուան
համաձայն ուղղութիւն մը տալ այդ
յարկին։

Անտառ շարժու թիւրք մէջ—ճու-
լապէն (որ խառան հնագոյն քր-
դաքէն 8 Ժամ հեռուն կ'ընայ)
կառավարութեան տեղեկութիւնք
հասնելով ծանուցին թէ խառան
զիւրքաքաղքի բաղմամբ Ձէրքէզ
գաղթականք, որքէ՛ Մարթինի ճը-
րացաններով զինեալ են, խմբովին
ի թուրք մէջ—ճուլապ առաւելով
տեղւոյն երկար գործ Արաբներու
վրայ կը յարձակին և անոնցմէ 10
չափ մեռեալ, նոյնչափ ալ վիրաւոր
ձգելով, այն անեանին ինչ զորս կը
գտնեն նոքա՝ կ'աւարեն և երկրա-
գործները յրուսելով կը մեկնին։ Այս
անհասելու լուրեր հաստատուեցան
քրիստոնեայ վաճառականի մը հա-
սած տեղեկութեամբ, որ թիւրք
մէջ—ճուլապ Արաբներն երկրա-
գործութիւնը ծաղկեցնելու համար
իւր նիւթական օժանդակութեամբ
անը հաստատած էր։

Այս դժգոյտեհ զէպք, որ ան-
գամ մ'ևս ի վեր կը հանէ Ձերքէզ-
ներու բարուց նկարագիր, յայտնի
բան է որ չէ թէ միայն դրամատի-
րոյ և երկրագործներու, այլ և նոյն
իսկ կառավարութեան շահուց հա-
մար ևս բացարձակապէս վնասակար
են։ Երբ երկրագործք, ոչք և վի-
նին, ապահովութիւն չեն գտներ
իրենց քրտամբք մշակուած հողի
մը վրայ, յետ այնորիկ ինչ կ'արժէ
այլ ևս այդ հող, և ինչ օգուտ
կրնայ արտադրել ի շահ կառավար-
ութեան կամ յօգուտ ժողովրդոց,
Շատ դերին է ստատէն կարգ մը
խորհրդածութիւն յաւելուլ. սա-
կայն մեք զգուշանալով հոս այն
տեսակ նիւթեր բացատրելէ, ոչք
քիչ շատ ուշադրութիւն գրաւած
են արդէն, կը վրձնանք բարեկե-
նամ կառավարութեան հոգածու-
թիւնը ինչպէր վասն այն անյա-
պաղ անօրինութեանց, որք անհը-
րաժեշտ են զբաղընն համար մի ո՛ր
և է խառանի ապեբաստութիւն,
որ երկրին տնտեսական և կամ մի
ուրիշ տեսակ շահուն կ'ապաւնայ։
Վերադառնալով թիւրք մէջ—

ճուլապի դէպքին, կ'երակացնեմ,
առ այժմ կառավարութիւնն անը
մի վրայաբոյժ իրական է ի ընդու-
թիւն, այս մասին առանց տակա-
ւին ուրիշ տնօրէնութիւն մ'ընելու։
Աթանասեան Հայ դերասանք և
դերասանուհիք, որոց աստ Ժա-
մանման հետ առժամանակեալ
Թատրոն մը հաստատելն արդէն
ճանուցած էի, բազմաթիւ ներկա-
յացումներ տուին և գոհութեամբ
կրնամ ծանուցանել թէ եղեսարք.
նակ աղքատ կողմէ նոքա բաւական
քաղաքութիւն գտան։ Դերասա-
նաց խումբն այս շարժու քաղա-
քէս մեկնեցաւ ի Տիրապէտքը։

Յաւելով ստացած եմ հետեւեալ
տխուր տեղեկութիւն։

Հիւսնի—Մանուրջի «Չիօեան
կարագետ» անուն 28 ամեայ յոյժ
յաջողակ Հայ երիտասարդն, որ
իւր երկրին մէջ իր նիւթական և
բարոյական ճոխութեամբ անգու-
գական քաղաքացի մը լինել կը
խոստանար, սե դաւաճանութեան
մը գոհ քննարկ է։ Դժբաղդ երի-
տասարդն, որ առևտրական յարա-
բերութիւններ ունէր Մամուստի
(Եփրատի եղբայր վրայ գերաբա-
ղաք մը) «Չաղա» Բրդաք հետ, Օ-
գոստոսի մէջ հոն գնացած էր իւր
գործոց կարգադրութեան համար
բայց այն Բրդեր, որոց վրայ մե-
ծադուրս պահանջ ունէր կարա-
պետ, միաբանեցան զայն մէջ տե-
ղէն վերցնելու, որպէս զի իրենք
պատրաստ լինէին գաղթելին։
Բուրդը, որոց քով խցի ձայն
անուշտ ներգործութիւն մը չու-
նէր, իրագործեցին իրենց սե խոր-
հուրդ «առեւտր» եղանակաւ մը, և
Բուրդը զգալի կարագետ,
որ ՚ն տարեկան ըր գաւակի մը հետ
վրտահար կը թողու իւր մանկա-
մարդ ամուսին։

Վերջին լրոց համեմատ, հան-
դուցեոյն ազգականք, դեռ չեն
հարձակած եղեռնագործներու
զէմ դատ բանալ մեզ անմասօթ
պատճառներով։

Սեւ-երակի (Երեսիոյ թեմ) ոչ-
Մահմետական աղքատ կրօնական
բուրք, թուականէս 3 օր առաջ
տեղւոյն Առաջնորդ սրբազանին հե-
ռադիր մ'ուղղելով կը ծանուցանեն
թէ նոյն օր Սեւ-երակի Գրաքա-
մին Հայոց հաւաքիչը (մա խմբով), և
ասկէ համարձակութիւն առնելով
Սեւ-երակ մ'ալ Ասորոց կրօնական
բուրք յանիւրաւի գանակած են,
և կը ինչպէն որ այս բանական
գործոց համար արժանի ի գարծ-
բուրի։ Առ այս՝ Առաջնորդ սրբա-
զանն՝ եկած հեռագրի պատճէին
հետ անմիջապէս մէյնիկ Բեքէր ուղ-
ղեց Գարբերդի կուսակալին և Մա-
տէնի կառավարին (ոչ իրաւասու-
թեան տակ է Սեւ-երակի Գրաքա-
մութիւն, ըստ քաղաքային բաժան-
ման) խնդրելով որ ծանուցեալ զէպ-
քերու մասին քննութիւն ընելով,
անոր արդեանց պահանջման հա-
մեմատ պարտուպատշաճն ի գործ
դնեն։

Հիւսնի մանուրջն առնուած
տեղեկութիւնք գոհացուցիչ լինելէ
հետի են։

Տեղւոյն ազգայինք երկպառակ-
եալ վիճակի մէջ կը գտնուին։ Վի-
ճակ մը, որ դժբաղդաբար անձ-
նական հաշիւներէ յառաջ եկած է։
Տեղւոյն ազգայինք դարձու որ ջա-
նասէր դաստառի մը Տիրա Սար-
դիս Ս. Յակոբեանի սրամարտու-
թեան տակ գտնուելով սկսած էր
օգտակար արդիւնք ցոյց տալ, եր-
կուշարաթ առաջ գոցուեցաւ հը-
րաժամամբ դասատուին, որուն
միակ շարժութիւն էր տիրոջ երկ-
պառակութիւն։

Տեղւոյն քահանայք, մեր առած
տեղեկութիւնք եթէ ճիշդ են, ու-
րոց մասին սակայն կ'ակածելու
պատճառ մը չունինք, ոչ միայն
ըստ ամենայնի տղէտ և գայթակ-
ղեցուցիչ վիճակի մէջ կը գտնուին,
այլ և ժողովրդային երկպառակու-

թեանց դիմաւոր դրօշակիրներն են,
Հիւսնի մանուրջի քահանայք, ան-
չուշտ այն կարգի կրօնականներէն
լինելու են, որոց տեղակալ Արմենո-
Բրդաստանի Հիւսնուս Մածօր
Թոթթթթրի աչքին գործելով, Նո-
րին վսեմութեան սուրիժ տուած է
իւր հռչակաւոր «Տեղեկագրոյն»
մէջ գնելու այն մաս, որ Հայ քա-
հանայից նկարագրի տխուր կը
պատկերացնէ։

Հիւսնի մանուրջն մեզ կ'իմա-
ցնեն թէ 50 ասուն պարզամիտ աղ-
քայինք, ոչք ուսուցիչ խոստում-
ներէ խաբուելով՝ Անգղիական եկե-
ղեցի հաստատող «Տ» կարագետ Սա-
րժանին հետեւած էին, նորէն մա-
րենի եկեղեցւոյ գլխի վերադար-
ձած են։

Չունար Լարբի.— Սեպտեմբերի
վերջի եօթնեկն մէջ քանի մը Հա-
յոց տուներ ցորեկ ատեն գողերի
կողոպտուեցան.— Ազգ.— Ս. Սարգսի
վանուց վասն հայրի տեղապահ կար-
գեցաւ Արժ. Տ. Արքահամ քահանայ
Արեւեան։ Սոյն Պատ. եկեղեցակա-
նին աշխատասիրութիւնն մեզ ծա-
նօթ լինելով, իւր նոր պաշտօնը կը շը-
նորհաւորեմք— Ամենոյ Չին սատարի
անձրեւ տեղալով դուրստեղբ բա-
ւական ողորմութեամբ տեղի ունեցան.
և ուր ուրք խոշոր մեծութեամբ
կարկուտք տեղացին։— Պարկեան
և պատուաւոր ազգային մը, Մեծ.
Տ. Ս. Պարտարար աղա, որ իւր
բարեպաշտական գործով ամենուն
ծանօթ էր, ամուս 7 ին բնութեան
հարկն վճարեց ի հասակի 90 ամաց,
որուն յուզարկաւորութիւն հան-
դիսաւոր կերպիւր և Առաջնորդ
Սրբազանի արմատականաւով պա-
տուեցաւ։ Մեր ցաւակցութիւնը կը
յայտնեմք Պատ. հանգուցեցելոյ Մեծ.
որդւոց և համայն պարագայից։
— Տեղւոյն էնքէ պաշտօնեայն, որ
արձակուրդի հրամանաւ ի ն. Պոլիս
պիտի ուղևորէր, իւր դէմ յարու-
ցեալ ծանր ամբաստանութեանց
համար պարտաւորեցաւ հոս մնալ։
— Տիրապէտքի Պարկական Հիւ-
պատոսն այս շարժու հոս եկաւ։

Վրէշտի Մասին 2981 երրորդ թը-
ւով հրատարակեալ թղթակցութեան
մէջ ստորեւ «2235» թուական «2235»
ըլլաւ է։

S. US. ՓԱՓԱՁԵԱՆ
Ի
ԻՐ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ
(Նորոգումներ)

Փափագեան էֆէնտին կը գովէ
ազգային ժողովին նախորդ միաց-
եալ կուսակցութիւնը ըսելով թէ
նոքա ազգային գործոց բարուք
մատակարարութիւնը տեսնել կը փա-
փագին։
Եթէ փափագեան էֆէնտին զին-
քը կ'ակնարկէ, հասարակութիւնը
գիտէ թէ ինքը ինչպէս մատակա-
րարեց ազգային գործերը որ իրեն
յանձնուած էին. այնչափ փտա-
հուրթիւն ստացաւ որ զինքը հեռա-
ցուցին այն գործերէն, և Հայ Պը-
լտոնական Թերթերէն մին անց-
եալները խորհուրդ կուտար իրեն
որ եթէ ազգասէր է՝ ինչպէս կ'ըսէ
ինք՝ ազգային գործերէ հեռու կե-
նայ։

Փափագեան էֆէնտին իւր ան-
վայել ու հակազգային վարմանց գի-
տակցութիւնն ունենալուն պատճա-
ռաւ յորս չունի որ կուսակցութիւն
մ'ունենայ յազգային ժողովն, ուստի
կը փափաքի որ ազատ լինի խօսելու
ու քննադատելու, և ժողովն ուզէ
թող ընդունի ուզէ թող մերժէ,
իսկ եւ կը յուսուած որ իւր գլխիցէ
ընտրուող միտքը բացուելով այ չեն
զրկեր զինքը յազգային ժողովն, որ
այ՝ ձանձրացաւ փափագեան էֆէն-
տին կեղծ ազգասիրական պերճա-
խօսութիւնը լսելէ։
«Ազգային ժողովոյ ատենագը-
րութիւնը կը վկայեն, կ'ըսէ, իմ այս
յայտարարութեանս (Պատրիարքներ

քննադատելու) որովհետեւ տարիմ
մնացի, որպիսի որ պարագայներն
լինձ ներքին, ու յայ ինքն թէ փա-
փագեան էֆէնտին քննադատեց
Պատրիարքները՝ քանի որ սոքա թող
չտուին իրեն միջամտել ազգային
գործոց մէջ, ու լուսութիւն պահեց՝
երբ նոյն գործոց մատակարարու-
թիւնը իրեն թողուած էր։

Փափագեան էֆէնտին կը պա-
հանջէ իւր երեսօտիական և
գառութիւնը, առանց որոյ, կ'ը-
սէ, ոչ եւս երեսօտիական կը մնայ։
Ամենուն ալ ուզածն այն է արդէն.
և ինչպէս յառաջագոյն ըսինք,
իւր հրաժարական տարուն իսկ
յուսանք, հարկ չմտար։

Փափագեան էֆէնտին Մոլիէրի
հանձարոյն կը յաւակին երբ կըսէ
թէ իւր քննադատութիւնը «նոյն
ճշգրտութեամբ յերեւան կը հասնի,
որ ազգային ժողովն կը պարտաւո-
րի անվտանգութեան քուէ տալ
Պատրիարք Սրբազանին համար և
զայն իշխանութենէ արկանելու Այս-
պիսի բարբառմանը ունին եւս իւր-
եանց օգուտը, այնու որ դիւրեմե-
րը զբռնաք կը հայթայթեն յետ
ընթացք ու մարտոցական դեղե-
րու պէտք չեն զգացունեն։

Իսկ իւր համարատուութեան
պահանջման գալով, մոռնալ կը
կեղծէ խորհրդարանական կենաց
ընթացքը և կը դիմէ այնպիսի ան-
խոհեմ միջոցներ, որ ազգասիր-
կան շրջանները պահպանութեան
յայտնի ապացոյց են։

Փափագեան էֆէնտին յուսահա-
տելով Ազգային ժողովին մէջ իւր
ձայնը լսեցունելէ, կը դիմէ մա-
մուլին իւր հակազգային ձեռնար-
կը շարունակելու նպատակաւ։ Ա-
զատ և փափագեան էֆէնտին իւր
յուսահատական բողոքներն ընելու
իրեն գործիք եղող Հայրենիքի մի-
լոցաւ. ազատ է ազգին դէմ մա-
քառելու, բայց գլխաւոր է որ
ունենալի պիտի չունենայ, թող
չյարձակի Պատրիարքարանի պաշ-
տօնէն զրոյս որ իւրեանց պարտքը
կը կատարեն փափագեան էֆէնտին
դէմ և որք բարեպաղաքար չեն
հնազանդի իրեն որպէս Պատրիար-
քը։

Փափագեան էֆէնտին կը ստէ
դարձեալ երբ կ'ըսէ թէ 20 տարիէ
ի վեր Պատրիարքաց կամ իշխած
է ամեն բանի մէջ և թէ առանց
նոքա թոյլտուութեան և անտար-
բերութեան ոչինչ եղած է ազգին
մէջ իսկ ես կը կրկնեմ թէ՛
Սահմանադրութեան թուականէն
ի վեր Պատրիարքը իւրեանց իշ-
խանութիւնը կորուսեր են և
թէ Պատրիարքարանը բարոյա-
կան մարմին մ'ըլլալէ դադարեց է-
գիտեմ՝ փորձով որ Պատրիարքին
գովելի հրամանները շարակամ
պաշտօնեայք մերժեր են կատա-
րել սահմանադրութեան վրային-
ով գլխաւոր որ Պատրիարքը՝ ընդ-
դէմ անիրաւեալ անձանց բողոքին
սահմանադրական պաշտօնեայինը
չէ կրցեր պատուհասել։ Գիտեմ
որ Սահմանադրութիւնը՝ 20 տա-
րիէ ի վեր ազգային շար պաշտօ-
նէնց ձեռք գործիք մ'եղած է
անիրաւութեան. և կը զարմանամ
երբ կը տեսնեմ որ փափագեան է-
ֆէնտին զայտոսիկ քալ գլխաւորով
կ'ընէ անկ թէ ազգը Պատրիար-
քաց գերի է եղեր Սահմանադրու-
թեան շնորհուրէն ի վեր։

Փափագեան էֆէնտին ըստ իւր
ըսածին, չուղեր եղեր զՊատրիար-
քը տապալել իւր պիտուէն, այլ ու-
ղեւ իւր բռնած ընթացքն որ ազ-
գային է եղեր։ Ազգն և օտարք
արդէն գիտեն որ ոչ թէ Սրբազան
Պատրիարքին ընթացքն է միասա-
կար Հայուն, այլ փափագեան է-
ֆէնտինի նման անձանց վարմունքն,
որ ազգին մեծ մըս կրնային բե-
րել, եթէ սոքա մեծամասնութիւն
մը կարենային կազմել։ Փափագեան
էֆէնտին Պատրիարք փոխելու քա-
ղաքականութեան չուղեր յարկ,
վասն զի, ըստ իւր կարծեաց, ա-
մէն Պատրիարք մի և նոյն ժաւզին
վրայ պիտի ըլլանան եղեր։ Փա-
փագեան էֆէնտին Պատրիարքու-

թիւր ինչը միտուած ունենալ
կը կեղծէ անուշտ այս խօսքերով։
Եթէ այսպիսի եղեղութիւն մը կա-
րել ըլլար, անտարակոյս ինքզին-
քը կ'առաջարկէր ազգապետու-
թեան ավթոռոյն. գէշ չէր ըլլար ի-
րեն համար, բայց ազգին համար՝
այն ուրիշ ինչքը։

Փափագեան էֆէնտին կը խոս-
տովանի որ Պատրիարքը տապալե-
լու ու նոր Պատրիարքը ընտրելու
քուէ չունի։ Չայս խոստովանելու
պէտք չունի, վասն զի զինքն ընտ-
րողը՝ որ անդէտ էին ընտրելոյն
կարծեաց ու դիտաւորութեանց,
չէին կրնար ու պիտի չուզէին իրեն
այնպիսի պաշտակ քուէ տալ.
զինքն Ազգային ժողովը զրկեցին
կարծելով որ ազգին նպատաւոր
ծառայութիւն պիտի մատուցաներ.
բայց այժմ հասկցած ըլլալու են,
որպէս մայրաքաղաքիս ամեն հա-
յեր, թէ փափագեան էֆէնտին
կ'նչպիսի դիտաւորութեանց ծառա-
յեր է մըտ ու կը ծառայէ տակա-
ւին։
(Մոլոցի—Յուրջ Խոռոյ)
Թ. Վ. ԱճէՄԵԱՆ

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ
Ի ՆՊՈՍԱ ՆԱՅԱՍԱՍԻՍ ՍՈՎԵՆՈՅ
Յան Նորոգումներ և Գործեր

Մեծ. Ետքը և Աշխատիւն Տիկնայք	Արժ. Բար.
Տէր Մանուէլ Տէր Անդրեասեան	20
Տեղ. Ստեփան Նապոստեան	20
Ստեփան Գրիգորեան	20
Գրաւիկ Թէրապեան	20
Մարտիկ Նախեան	20
Նշան Գեորգեան	20
Արքահամ Բեդրեան	20
Հաճի Մկրտ Նախեան	20
Մարտիրոս Պողոսեան	5
Նշան Մարտիրոսեան	5
Յարութեան Մարտիրոսեան	5
Ստեփան Գրիգորեան	5
Վահան Մարտիրոսեան	5
Սարգիս Արթուրեան	5
Երկիր Գոստանեան	5
Արթուր Միշտօֆեան	5
Յակոբ Մեծնիսեան	5
Թուրքի Գրիգորեան	5
Սեդրակ Եղաճարեան	5
Ստեփան Յովհաննէսեան	5
Ստեփան	5
Բարսեղ Նազարեան	5
Խաչիկ Ալեքսանեան	5
Բաւեղի Գրիգորեան	5
Յակոբ	5
Նապոստեան	5
Յարութեան Ստեփանեան	5
Արթուր Մարտիրոսեան	5
Չայկանդի	5
Փեփրոնիկ	5
Տեղաւոր	5
Գեորգ Գեորգեան	5
Արտուր Պրդիսեան	5
Գրաւիկ Նիկողոսեան	5
Խաչիկ Քլեմէնտեան	5
Յարութեան Նապոստեան	5
Հոռոյի Խաչիկեան	5
Մեծնայ	5
Մեքայէ Արթուրեան	5
Յակոբ Անդրեասեան	5
Անաստաս խոստալ	5
Մկրտիկ Սարգեան	5
Տեղաւոր ԱճէՄԵԱՆ	5
Յարութեան Յովհաննէսեան	5
Մեծնայ Մաղլուքեան	5
Աւետիս Եղիմիսեան	5
Պողոս Արթուրեան	5
Հաճի Սահակ Եղաճարեան	5
Նիկողոս Անդրեասեան	5
Գրիգոր Եղիմիսեան	5
Հաճի Չաքար Սարգիսեան	5
Արքահամ Յարութեան	5
Նորոգում Թիմոտեան	5
Չայկանդի Գրիգորեան	5
Գրիգոր Ճինկոզեան	5
Ստեփան Յովհաննէսեան	5
Ստեփան Թէրապեան	5
Վահան Խաչիկեան	5
Ս. Գ. Գրաւեան	5
Հաճի Ա	

ՅՈՒՆԱՍԱՀԱՅ ԲԱՌԳԻՐՔ

Նորայրի Գաղղիբերեն-Հայերեն ԲԱՌԱՐԱՆ ին 76 և 77րդ թերթերն հրատարակեցան:

Գաղղիական և իտալական լեզուաց ինչպես նաև տոմարակալութեան վարժ ազգային մը, շարժում էլ երկու կամ երեք օր աւելորդ ժամանակ ունենալով, կը վախճարի եւրոպայի հետ առևտուր ունեցող վաճառականի մը տօմարակալութիւնն ու լոգովակցութիւնը կատարել:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ ՓՈՁԵՑ ԿՍՐԻՆԷ ՍԿԶԻՈՒՆՔ ԳԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ Ի պէտս ազգային վարժարանաց

Կը գտնուի Մասիսի գրասենեան և Մէրճան Զարչիս Պ. Յովհան Աշճեանի գրասենեակը: Գին 6 զրուշ:

ՆՈՒՆԷ՛ ԿԱՂԱՆԴԻՒՒ ՊՍՏԿԵՐԵՆԶՈՒԻ Ի պէտս ազգային երկուսու մանկուոց Գրեյ Ս. Փ. Փոփոնտ:

Սոյն գիրքը՝ որ աղայոց համար լինող յարմար է, գեղեցիկ պատկերներով զարդարուած, և զը պարունակէ իր մէջ զանազան մտերմ վէպեր, կարևոր իրատեսեր, և այլ բարոյական դասեր, յորոց զպարտական երկուսու ուսանողք ասուշապ կրնան մեծ օգուտ քաղել:

Կեդրոնատեղին է Մէրճան փողոց Յովհան Աշճեանի գրասենեակը թիւ 33: Կը գտնուի նաև բոլոր Հայ գրականագետաց քով: Գին 60 փարս: Ի պարտաւոր համար մասնաւոր զեղը կըլլայ:

ՀԱՅՈՑ ՄԻՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ (Ն. ՏԷՐ ԱՆԻՄՆԵԱՆՑԻ) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ՀԱՏՈՐ

Սոյն գրասարքերն Գ. և վերջին հատորն ալ ի լոյս ընծայուած է, Պոլսոյ աշխարհագրաբան վերածուած և ընտիր ազգաբնակիչներ: Գին 5 դահեկան արծաթ:

Կեդրոնատեղին է Միացեալ Ընկերութեանց գրասենեակը, Ղայաթիւ, Կէօշէ-Օղլու խան, թիւ 11-12-13:

Կը գտնուի Պոլսոյ բոլոր Հայ գրականագետաց քով, նաև Ղայաթիւ, Պ. Յ. Զարչեանի Հայկական թղթակցատանոցը:

Գարոցաց համար մասնաւոր զեղը կըլլուի:

Հ. Կ. ԱՄՍՏՈՒՆԻ ՄՈՒՆԻԹԵՐ ՄԸ ՁՈՂԵՐԸ Գին 5 զրուշ

Կեդրոնատեղին է Մէրճան շարժին Պ. Յովհան Աշճեանի գրասենեակը թիւ 33:

ՏԷՄԻՐԳՈՒՓՈՒԼԵԱՆ ԵՂԱՐՑ ՄԻՍՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ Ի ՊԵՆՔՈՒՄ ԲՈՒՄ 165

Պատիւ ունիմք ծանուցանել մայրաքաղաքին և դաւառաց ժողովուրդներն թէ՛ մեր ծխախոտի Պոլսոյ գործարանն և վաճառատանն այժմ փոխադրած եմք ի Պարզաբաղը թիւ 165 Երզնկայի փողոցի դէմ: Մեր ծխախոտներն, որ արդէն մեծ ընդունելութիւն գտած են ա. մենտոլ, այս առթիւ զոհոցութիւն չպիտի ինչայեմք տեսակներն աւելի եւս ազնուացնելու և զիներն միշտ չափաւոր պահելու, որոց ստուգութեանը փորձով պիտի վկայեն աղիւր յաճախողքը և յանձնարարողքը:

ՏԷՄԻՐԳՈՒՓՈՒԼԵԱՆ ԵՂԱՐՑ ԻՄՐԱԳԻՐ-ՏԵՕՐԷՆ Կ. Ս. ԻԹԻԻԻՃԵԱՆ

Լրագիրս անեն օր կը հրատարակուի՝ բաց ի կիրակի և տօն օրերէ: Բաժանորդագրութեան տեղն է Կ. Պոլսոյ, Պարզ-Գաղա ձևով պէյ խան թիւ 51 Մասիս խորագրատունը: Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց գրասենեակները:

ԿԱՐԻՆ Յօշանդու էֆ. Տ. Մեղի. սեղեկեան. ԵՐԶՆԿԱՆ. Յ. Շաւարշ էֆ. ՍԵՐԱՍԻԱՆ. Երանոս էֆ. Սթամպուլ. Եան. ՍԱՄՍՈՒՆ. Երզնկայի էֆ. Մուրատեան ԿԻՐԱՍՈՒՆ. Գ. էֆ. Խ. Մազման. Եան. ՌԱՏԱՍՔՈ. Արթ. Տ. Արիտակէս. աւագ քահանայ Ֆէյսեան. ՁՄԻՒՆԻՒՆ. Աբրահամ էֆ. Պէր.

Դամասկոն: ՆԻԿՈՍԻՒՆ. Խորոզ էֆ. Էսկիճ. Եան. ՏՐԸՊԻՆՈՒՆ. Ս. Էթմէթ քեան էֆ. ԵՆԿԻՆԻՆ. Գէորգ էֆ. Նազարեան ԲԱՐԵՐԻՒ և ՏԷՐԱՍՄ. Կիրակոս էֆ. Ն. Ղազարեան. ՄՈՒՇ. Արմենայի էֆ. Խանադեան, ՎԱՆ. Պետրոս Գաբաւուճեան. ԲԵՐԻԱՆ. Սեդրակ Խարաճեան. ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թովմաս էֆ. Թաշ. ճեան. ԵՒԵՍԻԱ. Գէորգ էֆ. Կ. Ոսկերչեան ՅՕՔՇԱՆ. Ֆէրիտա Ս. Ֆէրիտա. Եան. ՏՓԻՒՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղևոնդ. Եան. ԿԱՂԱՔԱՆ. Պետրոս էֆ. Հէքիմ. Եան:



Փ Ա Ն Ա Ս Է

Դե՛՛՛՛՛ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԴԵ՛՛՛՛՛ ՍԱՄԱՐԱՑՈՒՑՆ

Կը ծախուի Միւնստեան և Ընկերաց Ամերիկեան վաճառատունը ի Ղալաթիա կոտանդնաւորայոց: Փանասէն իւր օգտակարութեամբն, ինչպէս Ամերիկայի և Եւրոպիոյ, նոյնպէս և Թուրքիոյ այլ և այլ կողմերը մեծ ընդունելութիւն գտած է. Փանասէն գեղացւոյն և դաւառացւոյն բժիշկն ու բարեկամն է և մեծ օրհնութիւնն մը համարուած է այն տեղերուն համար, ուր բժիշկ ու դեղ և դարման հազրու կը գտնուին: Փանասէն բուժողէն ներքէ բաղադրեալ լինելով՝ բոլորովին անվնաս է: Փանասէն այրածին ցաւը կ'առնէ ու քիչ առտե՛ն մէջ կը բուժէ. նոյնպէս և մարմնոյն կարուած ու ճմլուած տեղերուն ցաւն ու բորբոքը շուտով կ'անցնէ: Ձրային, յօգային և ոսկրային սաստիկ ցաւերը բուժելով՝ տաք նապեալը կը հանդարտեցնէ: Ստամոքսի, փորի և աղեսաց ցաւերը կը կտրէ ու պարզ յառաջ եկած դժուարութեանց առաջը կ'առնու: Փանասէն ակուայի սաստիկ ցաւերը շուտով կը բուժէ: Մարմնոյն կորուած կամ վերաւորեալ կողմերն առատ փանասէ քսելով շուտ կը բժշկուին ու կը գոցուին: Փանասէն կը բժշկէ նաև փորհարութիւն, թանջը, հազ, ցերձ, կոկորդի բորբոք և ուռեցք, մէջքի ցաւ և այլ զանազան ախտեր, որոց սկզբնապատճառը գրեթէ նոյնն են: Սոյնպէս կը վկայեն շատեր, սրբ փորձած են: Ընտանիք իրենց տան մէջ ու պանդուխտը և ճանապարհորդը իրենց մօտ փանասէ պահելով և յանկարծական դժուարութեանց առտե՛ն գործածելով՝ մեծ օգուտ կը քաղեն և ծանր հետևանաց առաջը կ'առնու: Փանասէն հեղուկ է, որ թէ՛ մարմնոյն վրայէն քսելով և թէ՛ խմելով ալ բժշկութիւն կը գործէ:

Կործանութեան կերպը հետն է: Կրկուսու վաճառատեղին է, Ղալաթիոյ Ենեի-ձամիլի դրան կից Միւնստեանի Ամերիկեան վաճառատունը, նաև մայրաքաղաքիս գեղազործաց քով ու դաւառներն ալ կը գտնուին:

Դ Ր Ա Մ Ա Կ Ա Ն

Table with financial data, including columns for 'ՀԱՆՔՈՒՑՈՑ ՊՈՐՍՍ' and 'ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍՍ'. It lists various items and their values in different currencies and units.



ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՒԿԵՆԱԻՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻՆԿԻ ԺԱՄԵՐԸ 1881 ՆՈՅՄԵՐԻ 1 ԿԻՐԱԿԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՁԵՒ ՆՈՅՄԵՐ 18 ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՒԿԵՆԱԻՆԵՐԸ

Table with columns for 'Ժամ' (Date), 'Եւրոպական եւրո' (European Euro), and 'Թի' (Rate). It lists various items and their prices.

Table with columns for 'Արեւմտ' (West) and 'Թի' (Rate). It lists various items and their prices.

Table with columns for 'Արեւմտ' (West) and 'Թի' (Rate). It lists various items and their prices.

Table with columns for 'Արեւմտ' (West) and 'Թի' (Rate). It lists various items and their prices.

ԿԱՄՈՒՐՁԷՆ ԵՂԱՐՑ ՇՈՒԿԵՆԱԻՆԵՐԸ

Table with columns for 'Ժամ' (Date), 'Եւրոպական եւրո' (European Euro), and 'Թի' (Rate). It lists various items and their prices.

Table with columns for 'Արեւմտ' (West) and 'Թի' (Rate). It lists various items and their prices.

Table with columns for 'Արեւմտ' (West) and 'Թի' (Rate). It lists various items and their prices.

Table with columns for 'Արեւմտ' (West) and 'Թի' (Rate). It lists various items and their prices.

Table with columns for 'Արեւմտ' (West) and 'Թի' (Rate). It lists various items and their prices.